

Տրամաբանական հարցեր

Հետաքրքիր, տրամաբանական խնդիրներ ցածր դասարանի աշակերտների համար:

1. Ինչպե՞ս ջուրը տեղափոխել մաղով:
Ջուրը սառեցնել, ապա տեղափոխել:
2. Ձին տեղափոխում է 10կգ ածուխ, իսկ պոնին՝ 10կգ բամբակ: Ո՞րն է բեռն է ավելի ծանր:
Երկու բեռն էլ նույն քաշն ունեն:
3. Ի՞նչ կա երկրի կենտրոնում:
«կ» տառը:
4. Ավտոմեքենայի ո՞ր անիվը չի պտտվում ընթացքի ժամանակ:
Պահեստային անիվը
5. Երկնքում այն մի հատ է, քաղաքում՝ երկու հատ, իսկ երկրագնդում ընդհանրապես չկա:
«ք» տառը
6. Ե՞րբ ենք նայում «2»-ին և ասում «10»:
Ժամատախտակի վրա, երբ ժամացույցի մեծ սլաքը կանգնած է լինում 2-ի վրա:
7. Գրեք բանաստեղծություն տասնչորս տառով:
բանաստեղծություն
8. Տղամարդը գնում է գնացքով և երազում տեսնում, որ նա նստած է հատակի վրա, իսկ հատակի տախտակները պոկվում ու ընկնում են ցած: Ու միայն մի տախտակ է մնացել:
Ի՞նչ պետք է անի տղամարդը, որպեսզի չընկնի:
Տղամարդը պետք է արթնանա:
9. Ո՞ր ծովում ջուր չկա:
Այն ծովում, որը պատկերված է քարտեզի վրա:
10. Ի՞նչն է ատամներով հասնում ծոծրակին:

Սանրը

11. Քայլում էին երկու մայր և երկու դուստր: Նրանք գտան 3 խնձոր և բաժանեցին միմյանց միջև: Յուրաքանչյուրը ստացավ մեկ խնձոր: Այդ ինչպե՞ս:
Քայլում էին թռնուհին, մայրին ու տատիկը:
12. Ո՞վ է յուրաքանչյուրին ցույց տալիս իր դեմքը, բայց ինքը դեմք չունի:
Հայելի
13. Որտե՞ղ է հնարավոր, որ ձին թռչի ձիու վրայով:
Շախմատում
14. Իրար կողք այրվում են մի շքեղ և մի աղքատ տներ: Ո՞ր տան հրդեհը առաջինը կհանգցնի ոստիկանությունը:
Ոստիկանությունը հրդեհ չի հանգցնում: